

ԵԱՀԿ.

ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

19 Սայաթ Նովա, Երևան

Հեռ.՝ +37410 58-26-38, Ֆաք.՝ +37410 52-70-82, Էլ.փոստ՝ mail@ichd.org, Ինտերնետ էջ՝ www.ichd.org

Դերակատարումն

Ժողովրդավարությունը սոսկ հրչակագրային հասկացություն չէ. այն նախ և առաջ օրենքի գերակայությունն է, մարդու իրավունքների պաշտպանվածությունը և էլի շատ ու շատ առաջնահերթություններ, որ կոչված են ապահովել մարդկանց բարեկեցիկ և արժանավայել համակեցությունը: Մրանք նաև այն գերակայություններ են, որ դրված են ԵԱՀԿ գործունեության հիմքում:

Յայտնի է, որ ԵԱՀԿ գերիննիրն անդամ 55 պետությունների խաղաղ գոյատևումն ու նրանց տարածաշրջանային անվտանգությունն ապահովելն է: Աշխարհագրական այն հսկա տարածքում, որն ընդգրկում են ԵԱՀԿ անդամ պետությունները, կազմակերպությունը կոչված է կանխարգելել ու նախազգուշացնել հնարավոր հականարտությունները, կարգավորել ծագած ճգնաժամերն ու հնարավորինս օժանդակել հետկոնֆլիկտային վերականգնման գործընթացներին:

Առկա կոնֆլիկտներն իրենց բնույթով, ծևերով ու պատմական հիմքերով տարբեր են, սակայն դրանք բոլորն ունեն էական ընդհանրություն/նմանություն, քանզի իրենց արմատներով գալիս ու հետևանքներով կրկին տանում են դեպի մարդու իիմնահարար իրավունքների ոտնահարում: Եվրոպական տարածաշրջանում ներդաշնակ հանրային միջավայր կայացնելու տեսլականն այս տեսանկյունից ուղղակիորեն հանգեցնում է ԵԱՀԿ-ի՝ իբրև ընդլայնված Եվրոպայում խաղաղության և կայունության ապահովման առավել ընդգրկուն կառույցի դերի ու նշանակության մեծացմանը:

Այսօր Եվրոպական այդ կառույցի անդամներ են Յարավային Կովկասի ու Կենտրոնական Ասիայի մի շարք պետություններ՝ անվտանգության ու կայունության իրենց հրատապ խնդիրներով: 1992 թվականին հենց ԵԱՀԿ շրջանակներում ծնունդ առավ Մինսկի համաժողովի գումարման գաղափարը, որտեղ պետք է ընդունվեր արցախյան իիմնահարցի կարգավորման ամենաբարենպաստ առաջարկը: Տարիների ընթացքում այն վերանվանվեց ու միջազգայնորեն ճանաչվեց որպես Մինսկի խումբ, որի եռանախագահությունն այսօր իրականացվում է աշխարհի երեք խոշոր տերությունների՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի Դաշնության և Ֆրանսիայի նախագահների հատուկ ներկայացուցիչների կողմից:

Մերօրյա վերափոխումներ

Առանձին փորձագետներ նշում են, որ ԵԱՀԿ-ն այսօր ճգնաժամ է ապրում: Ընդ որում, ըստ վերջինների, դա գալիս է ոչ միայն այդ ինստիտուտի գործունեությունից, այլ հենց այն մեխանիզմներից, որ դրված են ԵԱՀԿ գործունեության հիմքում: Այստեղ ավելի հաճախ նաև մատմանշվում է կոնսենսուսով որոշումների կայացման սկզբունքը, որը շատ հաճախ դանդաղեցնում կամ պարզապես կասեցնում է իիմնավոր թվացող շատ լուծումների կյանքի կոչումը: Այլոք հակադարձում են, թե հենց այդ մեխանիզմները և մասնավորապես որոշումների կայացման կոնսենսուսային տարբերակն է, որ ուժեղացնում է ԵԱՀԿ դերը՝ բոլոր անդամ-պետություններին տալով սեփական շահերը պաշտպանելու առավելագույն հնարավորություն:

Այսօրինակ քննարկումներն էին թերևս պատճառը, որ ԵԱՀԿ-ն մտավ ինստիտուցիոնալ բարեփոխումների փուլ: Ակնհայտ է, որ այդ բարեփոխումները հաջող ելք կունենան այն դեպքում, եթե դրանք նպատակաւորված լինեն կազմակերպության արդյունավետության, ինչպես նաև նրա դերի և հեղինակության բարձրացմանը: ԵԱՀԿ ներկա, այսպես կոչված, «ճգնաժամը» հնարավոր է հաղթահարել, եթե հաշվի առնվեն բոլոր մասնակից պետությունների կարիքները, կարծիքները և մտահոգությունները: Այդ համա-

տեքստում հայ փորձագետներն ակնկալուն են, որ ԵԱՀԿ-ը կդառնա առավել անկողմնակալ և արդար՝ հարգելով բոլոր նասնակից պետությունների ինքնիշխանությունը:

ԵԱՀԿ- Հայաստան

Եվրոպական և Եվրախնտեգրման ուղղությունը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության գերակայություններից է: Հայաստանը՝ 1992թ. ի վեր անդամակցելով ԵԱՀԽ/ԵԱՀԿ-ին, զգուշ է այս կազմակերպության համապարփակ անվտանգության հայեցակարգի միջոցով նպաստել Եվրոպական անվտանգության ամրապնդման գործին՝ անվտանգության մարդկային, ռազմական, քաղաքական և տնտեսական հարթություններում: ԵԱՀԿ-ը դրական դերակատարում ունի տարածաշրջանում կայունության հաստատման, համապարփակ անվտանգության, հակամարտությունների կանխարգելման և կարգավորման ինչպես նաև մարդու իրավունքների և ժողովրդավարության տարածման գործընթացներում:

Ակտիվ է նաև ԵԱՀԿ գրասենյակը Երևանում: Գործունեության հիմնական ուղղություններն են օրենսդրական դաշտի կատարելագործումը, մարդու իրավունքների պաշտպանումը, մանուլի ազատության, բնապահպանական/տնտեսական, ռազմաքաղաքական ոլորտի տարածաշրջանային և երկկողմ փոխհամագործակցությունը, ինչպես նաև կրթական և հասարակական իրազեկության ծրագրերի մշակումը, և այլն:

Միաժամանակ գրասենյակը, իր մանդատի շրջանակներում և համաձայն ԵԱՀԿ կենտրոնակայանի որոշումների, ծավալել է նոր՝ տնտեսական և անվտանգության ոլորտի համագործակցություն, քննարկելով ՀՀ Ազգային անվտանգության և Ոստիկանության հետ երկա և հետագա Հայաստան-ԵԱՀԿ փոխհամագործակցության հարցերը, մասնավորապես՝ հակասահարթեկչական, անվտանգության, ոստիկանական ոլորտներում երկարաժամկետ ծրագրերի համատեղ մշակման ու համագործակցության խնդիրները:

Հայաստանի համար էական նշանակություն կարող է ունենալ ակտիվ մասնակցությունը ԵԱՀԿ 2006թ. Տնտեսական ֆորումին, որն այս անգամ նվիրված է տրանսպորտային ուղիներին և դրանց անվտանգությանը: Հաշվի առնելով, որ մեր երկրի համար տրանսպորտային ուղիներն ունեն առանձնահատուկ նշանակություն՝ հայկական կողմը պետք է ակտիվորեն մասնակցի և կառուցողական առաջարկություններով հանդես գա ինչպես ֆորումի նախապատրաստական աշխատանքների, այնպես էլ բուն ֆորումի ընթացքում:

Ինչպես և նախկինում այսօր հայկական հասարակության համար հատկապես էական նշանակություն ունի ԵԱՀԿ և Մինսկի խմբի համանախագահողների գործունեությունը Արցախի խնդիրի կարգավորման հարցում: Թուրքիայի կողմից շարունակվող՝ «Փակ սահմաններով ճնշելու» քաղաքականության, Աղրբեջանում սաստկացող ռազմատենչ մքնոլորտի առկայության պայմաններում ժամանակն է, որպեսզի Եվրոպական կառույցները և հատկապես ԵԱՀԿ-ն կոնկրետ և սկզբունքային դիրքորոշում ցուցաբերի ննան կարգի ագրեսիվ մոտեցումների հանդեպ: Հակառակ դեպքում մենք պետք է հաշտվենք ուժի դիրքերից քաղաքականության իրականացման նոր մարտահրավերի օրինականացման գործընթացի հետ:

Համառոտագիրը մշակվել է ՍԶՍԿ կողմից 2005թ-ի առյենքերի 21-22-ին «ԵԱՀԿ արժեքները, սկզբունքները և պարտավորությունները որպես ԵԱՀԿ տարածաշրջանի անվտանգությամ և համագործակցության երաշխիք. հստակ քայլեր Հայաստանի Եվրախնտեգրման ուղղությամբ» թեմայով կազմակերպված միջազգային համաժողովի մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա:
Համաժողովը կազմակերպվել էր ԵԱՀԿ և Եվրախորհրդի երևանյան գրասենյակ-ների աջակցությամբ: